

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ արտոնորի եզրակացություն

2019թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն.....	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	10

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կրեդիտ Կորպ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությանը և խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կրեդիտ Կորպ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2019թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Կրեդիտ Կորպ» ՈՒՎԿ ՓԲԸ ֆինանսական վիճակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ASATRYANS LLC
Sakharov Business Center,
48/1 Nalbandyan street, 5th floor,
Yerevan 0010, Armenia
T. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
E-mail: general@asatryans.com
www.asatryans.com

ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ
Սախարով Բիզնես-Կենտրոն,
Նալբանդյան փող. 48/1, 5-րդ հարկ,
ՀՀ, Երևան, 0010
Հ. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
Էլ. հասցե՝ general@asatryans.com
www.asatryans.com

Առանցքային աուդիտորական հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով

առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման արձնդատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյեք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևավոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախագգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ

բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի, որի արդյունքը այս աուդիտորական եզրակացությունն է, ղեկավարը Ալբերտ Ասատրյանն է:

25 հունիսի 2020թ.

Մերգեյ Ասատրյան

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն

Առաջադրանքի ղեկավար

The image shows two handwritten signatures in blue ink. The signature on the left is for Mergeri Asatryan, and the signature on the right is for Albert Asatryan. In the center, there is a circular blue stamp. The stamp contains the text "ASATRYANS" in the center, "02618043" below it, and a full circle of text in Armenian and English: "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍՏՐՅԱՆՍ ՍՊԸ" and "ASATRYANS ACCOUNTING & TAX CONSULTANTS LTD. OF PATENTED LIABILITY".

ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ (Կրեստոն Արմենիա)
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծնք.		
Տոկոսային եկամուտ	159,173	148,734
Տոկոսային ծախս	(47,943)	(49,112)
Զուտ տոկոսային եկամուտներ	4	99,622
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	14,058	14,052
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(1,232)	(394)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	5	13,658
Փոխարժեքային տարբերություններից զուտ եկամուտ/(վնաս)	(6,726)	(791)
Այլ գործառնական եկամուտներ	3,427	55,280
Այլ գործառնական ծախսեր	(737)	(53,309)
Գործառնական եկամուտ	6	114,460
Հաճախորդներին տրված վարկերի (արժեզրկումից կորուստներ)/արժեզրկման վերականգնում	7	(73,324)
Դեբիտորական պարտքերի արժեզրկման հակադարձում	386	917
Անձնակազմի գծով ծախսեր	8	(55,992)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	9	(63,875)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	(72,785)	24,991
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	10	19,172
Տարվա շահույթ/(վնաս)	(53,613)	36,335
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	(53,613)	36,335

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 2020թ. հունիսի 25-ին՝

Քազրատ Մուշեղյան
 Տնօրեն

Վանն Գրիգորյան
 Գլխավոր հաշվապահ



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 58-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծնք.		
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ բանկերում	11	2,190	422
Հաճախորդներին տրված վարկեր	12	1,190,853	1,144,001
Դեբիտորական պարտքեր բյուջեից		11,801	12,388
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	27,336	37,288
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	14	63,167	-
Հետաձգված հարկային ակտիվ	15	23,195	43,632
Այլ ակտիվներ		45,786	45,714
Ընդամենը ակտիվներ		1,364,328	1,283,445
<i>Պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	16	657,310	609,040
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	12,323
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	14	68,770	-
Այլ պարտավորություններ և պահուստներ	17	14,510	11,721
Ընդամենը պարտավորություններ		740,590	633,084
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	18	600,000	600,000
Լրացուցիչ կապիտալ		95,064	68,075
Կուտակված վնաս		(71,327)	(17,714)
Ընդամենը սեփական կապիտալ		623,737	650,361
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		1,364,328	1,283,445

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 58-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	600,000	60,579	(54,049)	606,530
Տարվա շահույթ/(վնաս)	-	-	36,335	36,335
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	36,335	36,335
Կապիտալի համալրում	-	7,496	-	7,496
Գործարքներ սեփականատերերի հետ	-	7,496	-	7,496
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	600,000	68,075	(17,714)	650,361
Տարվա շահույթ/(վնաս)	-	-	(53,613)	(53,613)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	(53,613)	(53,613)
Կապիտալի համալրում	-	26,989	-	26,989
Գործարքներ սեփականատերերի հետ	-	26,989	-	26,989
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	600,000	95,064	(71,327)	623,737

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 58-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ/(վնաս)	(53,613)	36,335
<i>Ճշգրտումներ`</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	11,697	12,877
Արժեզրկման պահուստների գծով զուտ շարժ	8,375	18,505
Չուտ փոփոխություններ հաշվեգրված տոկոսագումարներում	1,372	(4,604)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(19,172)	(11,344)
Հաշվեգրված տոկոսներ	(8,643)	(49,112)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	6,726	(791)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	(53,258)	1,866
Հաճախորդներին տրված վարկերի աճ	(46,852)	(216,940)
Այլ ակտիվների աճ/(նվազում)	(72)	45,049
Այլ պարտավորությունների փոփոխություն	2,789	(470)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(97,393)	(170,495)
Վճարված տոկոսներ	(47,943)	(49,112)
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	(145,336)	(219,607)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	44,345
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,652)	(6,596)
<i>Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	(1,652)	37,749
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկեր և փոխառություններ	1,233,417	1,060,874
Վարկերի և փոխառությունների մարում	(1,084,518)	(879,184)
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	148,899	181,690
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	1,911	(168)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(143)	(143)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	422	733
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	2,190	422

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 58-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Կրեդիտ Կորպ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ), որպես փակ բաժնետիրական ընկերություն, որի 100% բաժնետոմսերը պատկանում են ՀՀ քաղաքացի Վարդան Վարդանյանին: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից և այն գործունեություն է իրականացնում 2010թ. նոյեմբերի 9-ին տրված N 36 արտոնագրի համաձայն:

Ընկերությունը զբաղվում է վարկավորմամբ և տրամադրում է սպառողական, հիփոթեքային և առևտրային վարկեր, ինչպես նաև իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով թույլատրվող այլ գործունեություն, որը ներկայացված է ստորև՝

- ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ հրապարակային օֆերտաների միջոցով միջոցների ներգրավման,
- տրամադրել փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
- տրամադրել երաշխիքներ,
- մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում,
- գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ,
- մատուցել ֆինանսական խորհրդատվություն՝ իրականացնել տնտեսության ոլորտների շուկաների վերլուծություն, կազմել քիզնես ծրագրեր և այլն,
- գնել ու վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
- ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր և այլ արժեքներ,
- ՀՀ ԿԲ համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ:

Վարկերը տրամադրվում են ինչպես տեղական արժույթով, այնպես էլ արտարժույթով:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 7-11:

Ընկերության գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 7-11:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ՀՀ-ում ունի 1 գրասենյակ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

2.2 Ծանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում:

2.5 Կազմակերպության կողմից ընդունված նոր և փոփոխված ստանդարտներ

Կազմակերպությունը, սկսած 2019թ. հունվարի 1-ից պատրաստվող տարեկան ֆինանսական հաշվետվություններում, առաջին անգամ կիրառել է հետևյալ ստանդարտները և փոփոխությունները՝

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՍԿ		Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	
ՖՀՄՍԿ	Նկարագրություն	համար	Կիրառությունը
ՖՀՄՍ 16	Վարձակալություններ	2019թ. հունվարի 1	Հետընթաց

ՖՀՄՍ 16. «Վարձակալություններ»

ՖՀՄՍ 16-ը փոխարինել է ՀՀՄՍ 17. «Վարձակալություններ», ՖՀՄՍԿ 4. «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՍԿ 15. «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՍԿ 27. «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»: Ստանդարտը սահմանում է վարձակալությունների ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները, և վարձատուներից պահանջվում է ճանաչել վարձակալության մեծ մասը հաշվեկշռում:

ՖՀՄՍ 16 ներկայացնում է վարձակալության պայմանագրերի և հաշվապահական հաշվառման վարման համապարփակ մոդել երկու կողմերի համար՝ վարձակալի և վարձատուի մոտ: Այն վարձակալի մոտ ներկայացնում է էական փոփոխություններ՝ բացառելով գործառնական և ֆինանսական վարձակալության միջև տարբերությունը, պահանջում է օգտագործման իրավունք ունեցող ակտիվի ճանաչում և բոլոր նոր սկսվող վարձակալությունների գծով վարձակալության պարտավորության՝ «Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով» ճանաչում, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Ի տարբերություն վարձակալի մոտ հաշվապահական հաշվառման վարման, վարձատուի մոտ հաշվապահական հաշվառման պահանջները հիմնականում մնացել են անփոփոխ:

ա) Վարձակալության նոր սահմանման ազդեցությունը

Կազմակերպությունը գործնական նպատակահարմարությունից ելնելով, չի վերազնահատել արդյոք պայմանագրերը վարձակալություն են կամ պարունակում է արդյոք վարձակալության տարր, ինչը թույլատրվում է ՖՀՄՍ 16-ին անցման ժամանակ (ՖՀՄՍ 16-ի առաջին անգամ կիրառման պահին): Համապատասխանաբար, վարձակալության սահմանումը, համաձայն ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի, կշարունակի կիրառվել մինչև 2019թ. հունվարի 1-ը կնքված կամ մինչև նշված ամսաթիվը փոփոխված պայմանագրերի վրա:

Վարձակալության սահմանման մեջ հիմնական փոփոխությունը վերաբերվում է վերահսկողության հասկացությանը: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, արդյոք պայմանագիրը պարունակում է վարձակալություն, ելնելով այն բանից, արդյոք Կազմակերպությունը իրավունք ունի վերահսկել տվյալ իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործումը, որոշակի ժամանակահատվածի ընթացքում, փսխատուցման դիմաց: Սա հակասում է ՀՀՄՍ 17-ում և ՖՀՄՍ 4-ում մատնանշված «ռիսկերի և օգուտների» շեշտադրմանը:

Կազմակերպությունը ընդունել է վարձակալության սահմանումը և կից ուղեցույցները, որոնք նշված են ՖՀՄՍ 16-ում, բոլոր աայն պայմանագրերի կամ դրանց փոփոխությունների մասով, որոնք կատարվել են կամ կնքվել են 2019թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո: ՖՀՄՍ 16-ի առաջին անգամ ընդունման կամ կիրառման ժամանակ Կազմակերպությունը իրականացրել է սույն ստանդարտի ներդրման ծրագիր (պրոյեկտ): Ներդրման պրոյեկտը ցույց է տալիս, որ ՖՀՄՍ 16-ով նոր սահմանումը էականորեն չի փոփոխելու պայմանագրերի շրջանակը, որոնք բավարարում են Կազմակերպության վարձակալության սահմանմանը:

բ) Վարձակալի հաշվապահական հաշվառման վրա ազդեցությունը

Համաձայն նախկին ստանդարտի (ՀՀՄՍ 17), ՖՀՄՍ 16-ը փոխում է Կազմակերպությունում վարձակալության հաշվապահական հաշվառումը, որոնք նախկինում ՀՀՄՍ 17-ով դասակարգվել են գործառնական վարձակալություն՝ դուրս մնալով՝ չներառվելով, հաշվապահական հաշվեկշռում:

ՖՀՄՍ 16-ի կիրառման ժամանակ, Կազմակերպությունը բոլոր վարձակալությունների մասով (բացառությամբ վերոնշյալ դեպքերի) պետք է՝

- Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճանաչում որպես ակտիվ և Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության ճանաչում Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում (ՖԴՄՀ), որոնք սկզբնական ճանաչման պահին չափվում են սպառված վարձավճարների ներկա արժեքով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում և ներկայացվում են առանձին հոդվածով

- Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի գծով մաշվածության ճանաչում և Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության տոկոսների ճանաչում Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում
- Վարձակալական գծով լրացուցիչ պարտավորության ճանաչում և ներառում Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով կամ Տոկոսային վարկեր և փոխառություններ պարտավորություններում
- «Կանխավճարներ» և «Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր» հոդվածներում ներառված նախկին գործառնական վարձակալության հոդվածները ապաճանաչի
- «Հետաձգված հարկային պարտավորությունները» այս մասով նվազեցնել, որը պայմանավորված է ակտիվ ճանաչված վարձակալության և պարտավորություն հետևանքով հետաձգված հարկի ազդեցության փոփոխության հետ
- Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում առանձնացված ներկայացնի վարձակալության մայր գումարի վճարումն ու տոկոսները (որոնք ներառված են ֆինանսական գործունեության մեջ): ՖՀՄՍ 16-ի համաձայն վարձակալները պետք է ներկայացնեն դրամական միջոցների վճարումները՝ Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, ֆինանսական գործունեության հոդվածում (Գործառնական գործունեությունից ֆինանսական գործունեություն): ՖՀՄՍ 16-ի ընդունումը ոչ մի ազդեցություն չի ունեցել դրամական միջոցների գուտ հոսքերի վրա:

Վարձակալության արտոնությունները (օրինակ՝ առանց վարձավճարի ժամանակահատված) պետք է ճանաչվեն օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության չափման մի մաս:

ՖՀՄՍ 16-ի համաձայն օգտագործման իրավունքի ձևով ակտիվները արժեզրկման ստուգման են ենթարկվում համաձայն ՀՀՄՍ 36. «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի:

Կարճաժամկետ վարձակալություննորի դեպքում (երբ վարձակալության ժամկետը մինչև 12 ամսի կամ ավելի կարճ է) և փոքրարժեք վարձակալած ակտիվների դեպքում (ինչպիսիք են օրինակ՝ սեղանները և համակարգիչները, փոքրարժեք գրասենյակային կահույքը և հեռախոսները), Կազմակերպությունը որոշել է ճանաչել վարձակալության գծով ծախսը գծային մեթոդով, ինչը թույլատրվում է ՖՀՄՍ 16-ով: Այս ծախսը ներկայացված է Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում «Այլ ծախսեր» հոդվածում:

զ) Վարձակատուի հաշվապահական հաշվառման վրա ազդեցությունը

ՖՀՄՍ 16-ը էականորեն չի փոփոխել հաշվապահական հաշվառումը վարձատուի մոտ: ՖՀՄՍ 16-ի համաձայն, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալության տված գույքը կամ ֆինանսական վարձակալություն կամ գործառնական վարձակալություն և այս երկու տեսակի վարձակալությունների համար առանձին է վարում հաշվառումն:

Այնուամենայնիվ ՖՀՄՍ 16-ը փոխել և ընդլայնել է պահանջվող բացահայտումները, մասնավորապես ինչպես է վարձատուն կառավարում ռիսկերը՝ կապված վարձով տրված ակտիվների իր մասով մնացորդի գծով:

Համաձայն ՖՀՄՍ 16-ի, միջանկյալ վարձատուն (ենթավարձակալություն) պետք է այս երկու պայմանագրերը՝ վարձակալած ակտիվներ և վարձով տրված ակտիվներ, առանձին հաշվառի, որպես առանձին պայմանագրեր: Միջանկյալ վարձատուն պետք է դասակարգի ենթավարձակալությունը, որպես ֆինանսական կամ գործառնական՝ հիմնվելով գլխավոր

պայմանագրից բխող օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճանաչման վրա (այլ ոչ թե այնպես, ինչպես նշված էր ՀՀՄՍ 17-ում):

Այս փոփոխությունների համաձայն Կազմակերպությունը վերադասակարգել է իր որոշ ենթավարձակալական պայմանագրեր, որպես ֆինանսական վարձակալություն: ՖՀՄՍ 9. «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի համաձայն ակնկալվող վնասների գծով պահուստը ճանաչվել է ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերում:

Ստորև ներկայացված է ՖՀՄՍ 16-ի ընդունման ազդեցությունը.

Ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա.

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	27,336	-	27,336
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	63,167	63,167
Ընդհանուր ակտիվների վրա գուտ ազդեցությունը	27,336	63,167	90,503
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ/(վնաս)	(46,360)	(24,967)	(71,327)
	(46,360)	(24,967)	(71,327)
Պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	-	68,770	68,770
Պահուստներ	6,887	-	6,887
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,872	-	4,872
Ընդհանուր պարտավորությունների վրա գուտ ազդեցությունը	11,759	68,770	80,529
	(34,601)	43,803	9,202

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	37,288	-	37,288
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-

Ընդհանուր ակտիվների վրա գուտ ազդեցությունը	37,288	-	37,288
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ/(վնաս)	(17,714)	-	(17,714)
	(17,714)	-	(17,714)
Պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	-	-	-
Պահուստներ	5,423		5,423
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,726		3,726
Ընդհանուր պարտավորությունների վրա գուտ ազդեցությունը	9,149	-	9,149
	(8,565)	-	(8,565)

2018թ. հունվարի 01-ի դրությամբ

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշվարկված
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	49,672	-	49,672
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-
Ընդհանուր ակտիվների վրա գուտ ազդեցությունը	49,672	-	49,672
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ/(վնաս)	(54,049)	-	(54,049)
	(54,049)	-	(54,049)
Պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	-	-	-
Պահուստներ	3,479	-	3,479
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,067		6,067
Ընդհանուր պարտավորությունների վրա գուտ ազդեցությունը	9,546	-	9,546
	(44,503)	-	(44,503)

Ազդեցությունը շահույթի կամ վնասի մասին հաշվետվության վրա.

2019թ.

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(36,671)	(27,204)	(63,875)
Գործառնական շահույթ	(36,671)	(27,204)	(63,875)
Ֆինանսական ծախսեր			-
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	22,613	(5,441)	19,172
	(12,058)	(32,645)	(44,703)

2018թ.

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(44,763)	-	(44,763)
Գործառնական շահույթ	(44,763)	-	(44,763)
Ֆինանսական ծախսեր			-
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	11,344	-	11,344
	(33,419)	-	(33,419)

Կազմակերպության ղեկավարությունը չի կանխատեսում, որ այս փոփոխությունների կիրառումն էական ազդեցություն կունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընթացիկ տարում Կազմակերպությունը կիրառել է ՀՀՄՄԽ կողմից թողարկված ՖՀՄՍ մի շարք փոփոխություններ և ներկայացրած փոփոխություններ, որոնք գործում են 2019թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Դրանց ընդունումը որևէ էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների կամ բացահայտումների վրա:

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար
Փոփոխություններ ՖՀՄՍ 9. «Կանխավճարի հատկանիշներ` բացասական փոխհատուցմամբ» ստանդարտում	ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները հստակեցնում են, որ գնահատելու համար, թե արդյոք կանխավճարի հատկանիշը բավարարում է «բացառապես մայր գումարի և տոկոսների վճարումներ» (SPPI) չափանիշին, օպցիոնն օգտագործող կողմը կարող է վճարել կամ կանխավճարի համար ստանալ	1 Հունվարի, 2019թ.

**Նշված ամսաթվից
 կամ դրանից հետո
 սկսվող տարեկան
 ժամանակաշրջանների
 համար**

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	
	ողջամիտ փոխհատուցում՝ անկախ կանխավճարի պատճառից: Այլ կերպ ասած, բացասական փոխհատուցմամբ կանխավճարի հատկանիշներ ունեցող ֆինանսական ակտիվները ինքնաբերաբար չեն ձախողում SPPI չափանիշը:	
Փոփոխություններ ՀՀՄՍ 28. <i>«Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում»</i> ստանդարտում	Փոփոխությունները հստակեցնում են, որ ՖՀՄՍ 9-ը՝ տարածվում է ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության այլ ֆինանսական գործիքների վրա, որի նկատմամբ չի կիրառվում բաժնային մեթոդը, ներառյալ դրա արժեզրկման պահանջները: Դրանք ներառում են երկարաժամկետ մասնակցությունը, որն, ըստ էության, ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկությունում գուտ ներդրումների մաս է կազմում:	1 Հունվարի, 2019թ.
Փոփոխություններ ՖՀՄՍ 3. <i>«Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»</i> ստանդարտում	Փոփոխությունները հստակեցնում են, որ երբ Կազմակերպությունը վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության նկատմամբ, Կազմակերպությունը կիրառում է փուլերով ձեռք բերված ձեռնարկատիրական գործունեության միավորման պահանջները՝ ներառյալ համատեղ գործունեությունում նախկինում ունեցած մասնակցության վերաչափումը իրական արժեքով: Նախկինում ունեցած մասնակցությունը, պետք է վերաչափվի, ներառյալ համատեղ գործունեության հետ կապված ցանկացած չճանաչված ակտիվներ, պարտավորություններ և գուդվիլ:	1 Հունվարի, 2019թ.
ՖՀՄՍ 11. <i>«Համատեղ պայմանավորվածություններ»</i> ստանդարտ	Փոփոխությունները հստակեցնում են, որ այն դեպքում երբ ձեռնարկատիրական գործունեություն սահմանվող համատեղ գործունեության մասնակցող կողմերից մեկը, որը, սակայն համատեղ վերահսկողություն չունի համատեղ գործունեության նկատմամբ, վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության նկատմամբ, սպա Կազմակերպությունը համատեղ գործունեությունում նախկինում ունեցած մասնակցությունը չի վերաչափում:	1 Հունվարի, 2019թ.

**Նշված ամսաթվից
 կամ դրանից հետո
 սկսվող տարեկան
 ժամանակաշրջանների
 համար**

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	
ՀՀՄՍ 12. «Շահութահարկեր» ստանդարտ	Փոփոխությունները հստակեցնում են, որ Կազմակերպությունը պետք է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ կապիտալի հաշվետվություններում ճանաչի շահաբաժինների գծով շահութահարկի հետևանքը, կախված այն հանգամանքից, թե որտեղ է Կազմակերպությունը ի սկզբանե ճանաչել բաշխման ենթակա շահույթը սկզբնավորող գործարքները: Սա այն դեպքն է, անկախ նրանից, թե հարկային տարբեր դրույքաչափեր են տարածվում բաշխված և չբաշխված շահույթների վրա:	1 Հունվարի, 2019թ.
ՀՀՄՍ 23. «Փոխառության ծախսումներ» ստանդարտ	Փոփոխությունները հստակեցնում են, որ եթե որակավորվող ակտիվի կառուցման կամ ձեռքբերման համար ստացված հատուկ փոխառությունը դեռևս ունի չմարված մնացորդ և այդ ակտիվը պատրաստ է իր նպատակային օգտագործման կամ վաճառքի համար, ապա փոխառության մնացորդը դիտարկվում է որպես ընդհանուր նպատակով ստացված և ներառվում է կապիտալացման դրույթի հաշվարկի մեջ:	1 Հունվարի, 2019թ.
Փոփոխություններ ՀՀՄՍ 19. «Աշխատակիցների հատուցումներ. Պլանի փոփոխումը, կրճատումը և վերջնահաշվարկը» ստանդարտում	Փոփոխությունները հստակեցնում են, որ անցյալ ծառայության արժեքը (կամ վերջնահաշվարկից օգուտը կամ վնասը) հաշվարկվում է սահմանված հատուցումների գծով պարտավորության (ակտիվի) չափման միջոցով՝ օգտագործելով փոփոխված ենթադրությունները և առաջարկվող հատուցումները համեմատելով պլանի փոփոխությունից (կամ կրճատումից կամ վերջնահաշվարկից) առաջ և հետո, բայց անտեսելով ակտիվի վերին սահմանաչափը (որը կարող է առաջանալ այն դեպքում, երբ սահմանված հատուցումների պլանը ավելցուկային դիրքում է): Փոփոխվել են նաև այն կետերը, որոնք վերաբերում են ընթացիկ ծառայության արժեքի և գուտ սահմանված հատուցումների գծով պարտավորության (ակտիվի) գուտ տոկոսների չափմանը:	1 Հունվարի, 2019թ.

ՖՀՄՄ, ՀՀՄՄ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	
ՖՀՄՄԿ 23. <i>«Անորոշություններ շահութահարկը որոշելիս»</i> ստանդարտ	ՖՀՄՄԿ 23 սահմանում է, ինչպես որոշել հարկային հաշվառման մոտեցումը, երբ առկա են անորոշություններ շահութահարկը որոշելիս: Սեկնաբանությունը պահանջում է. <ul style="list-style-type: none"> • Որոշել, արդյոք անորոշ հարկային հաշվառման մոտեցումը դիտարկվում է առանձին, թե որպես Կազմակերպություն, և • Գնահատել, արդյոք հավանական է, որ հարկային մարմինը կընդունի կազմակերպության կողմից իր շահութահարկի հաշվարկում օգտագործված կամ առաջարկվող անորոշ հարկային հաշվառման մոտեցումը: <ul style="list-style-type: none"> - Եթե այո, Կազմակերպությունը հարկային հաշվառման մոտեցումը պետք է որոշի իր շահութահարկի հաշվարկում օգտագործված կամ ապագայում օգտագործվող հարկային հաշվառման մոտեցմանը համապատասխան: - Եթե ոչ, ապա Կազմակերպությունը անորոշության ազդեցությունը պետք է արտացոլի հարկային հաշվառման մոտեցումը որոշելիս՝ օգտագործելով կամ ամենահավանական գումար կամ ակնկալվող արժեք մեթոդները: 	1 Հունվարի, 2019թ.

Նոր և վերանայված ՖՀՄՄ ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Հրապարակվել են որոշ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտ(ներ) և մեկնաբանություններ, որոնք պարտադիր չեն 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի հաշվետվությունների պատրաստման համար և վաղաժամ չեն կիրառվել Կազմակերպության կողմից: Նոր ընդունված հաշվապահական ստանդարտների և մեկնաբանությունների ազդեցության գնահատումը Կազմակերպության կողմից ներկայացված է ստորև՝

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՍԿ	Նկարագրություն	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաննե րի համար	Կիրառությունը
ՖՀՄՍ 17. <i>«Ապահովագրության պայմանագրեր»</i> ստանդարտ	ՖՀՄՍ 17-ը սահմանում է սկզբունքներ ապահովագրական պայմանագրերի ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման համար և փոխարինում է <i>«Ապահովագրության պայմանագրեր»</i> ՖՀՄՍ 4-ին:	1 Հունվարի, 2022թ.	Հետընթաց
ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 (փոփոխություններ)	Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև սկտիվների վաճառք կամ հատկացում	Փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ պետք է որոշվի ՀՀՄՍԽ կողմից:	
Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում. <i>«Չեռնարկատիրական գործունեության միավորումներ»</i> ստանդարտում	Փոփոխությունները հստակեցնում են, որ շնայած բիզնեսը սովորաբար ունենում է արդյունք, գործունեության և սկտիվների ինտեգրված այդ հավաքածուն պարտադիր չէ որ որակվի որպես <u>բիզնես</u> : Որպեսզի ձեռք բերվող գործունեության և սկտիվների ինտեգրված այդ հավաքածուն համարվի <u>բիզնես</u> , ապա այն պետք է նվազագույնը պարունակի մուտքեր և բովանդակային գործընթաց, որոնք միասին զգալիորեն նպաստում են արդյունքներ ստեղծելու կարողությանը:	1 Հունվարի, 2020թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 1. <i>«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»</i> և ՀՀՄՍ 8. <i>«Էականության սահմանումը»</i> ստանդարտներում	Փոփոխությունների նպատակն է միայն տալ էականության տերմինի ավելի հասկանալի սահմանում ՀՀՄՍ 1 ստանդարտում և մտադրություն չկա փոփոխել էականության հասկացությունը ՖՀՄՍ ստանդարտներում: «Անորոշ» էական տեղեկատվություն և ոչ էական տեղեկատվություն հասկացությունները ընդգրկվել են նոր սահմանման մեջ:	1 Հունվարի, 2020թ.	Առաջընթաց
	Օգտագործողների որոշումների վրա ազդող էականության շեմի ազդեցությունը <i>«կարող է ազդել»</i> եզրույթից փոփոխվել է՝ դառնալով <u>«հավանականորեն հնարավոր է ազդեցություն ունենա»</u> : ՀՀՄՍ 8 ստանդարտում էականության սահմանումը փոխարինվել է ՀՀՄՍ 1 ստանդարտում էականության սահմանման հղումով: Ի լրումն, ՀՀՄՍԽ-ն փոփոխել է այլ ստանդարտներն ու Հայեցակարգային հիմունքները, որոնք ներառում են էականության սահմանումը կամ հղում են		

	կատարում «Էական» տերմինին՝ ստանդարտներին համապատասխանությունը ապահովելու նպատակով:		
Փոփոխություններ ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային հիմունքներին հղումներում	Վերանայված Հայեցակարգային հիմունքների հետ միասին, որն ուժի մեջ են մտնում 2018թ. մարտի 29-ին հրապարկվելուց հետո, ՀՀՄՍ-ն փոփոխություններ է կատարել նաև ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային հիմունքներին հղումներում: Փաստաթուղթը ներառում է փոփոխություններ ՖՀՄՍ 2, ՖՀՄՍ 3, ՖՀՄՍ 6, ՖՀՄՍ 14, ՀՀՄՍ 1, ՀՀՄՍ 8, ՀՀՄՍ 34, ՀՀՄՍ 37, ՀՀՄՍ 38, ՖՀՄՍԿ 12, ՖՀՄՍԿ 19, ՖՀՄՍԿ 20, ՖՀՄՍԿ 22 և ՄՍԿ 32 ստանդարտներում:	1 Հունվարի, 2020թ.	Առաջընթաց

Կազմակերպության ղեկավարությունը չի կանխատեսում, որ վերոնշյալ տեղեկատվությունը էական ազդեցություն կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Ընդհանուր դրույթներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք ուժի մեջ են եղել 2019թ. դեկտեմբերի 31-ին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

Արժույթ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	479.70	483.75
Եվրո	537.26	553.65

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումն այլ արժույթով

Ընկերության ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կրեդիտագրվում է սեփական կապիտալին՝ արտարժույթի վերագնահատման պահուստում:

3.3 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ

օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Գույք և սարքավորումներ	8 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Վարձակալված գույքի բարելավումներ	10 տարի

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝

Համակարգչային ծրագրեր	10 տարի
-----------------------	---------

3.5 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՀՀՍՄ 17-ի՝ «Վարձակալություն», վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ, ավելի ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով՝ գումարած միանվագ վճարները, եթե այդպիսիք կան: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումը, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է՝

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5 տարի
-------------------------------------	--------

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Ընկերության ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Ընկերության բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉԾՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնաստիճան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉՇՎ):

Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետո, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՉՇՎ մեթոդը: Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և Ընկերության կողմից, թողարկված ֆինանսական երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխան՝

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉՇՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉՇՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՉՇՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդնտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը Ընկերությունը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:
- Այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Կազմակերպությունը ոչ փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Կազմակերպությունը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Եթե Կազմակերպությունը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող» (ԻԱՉՇՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը ընտրել է ԻԱՉՇՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Կազմակերպությունը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Կազմակերպությունը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Կազմակերպությունը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Կազմակերպությունը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: «Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Կազմակերպությունը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Կազմակերպության պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Կազմակերպությունը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Կազմակերպությունը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

3.8 Արժեզրկում

Վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկում

Կազմակերպությունը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Կազմակերպության վարկերի արժեզրկման պահուստները ձևավորվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Կազմակերպությունը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող մասհանումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգալուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների հիման վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության

փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Կազմակերպության կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Կազմակերպությունը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կազմակերպությունը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհանումները որոշելիս:

Առանձին վերցրած նշանակալի վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերը և դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ մմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների և ժամկետանության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Կազմակերպությունը ապագա դրամական հոսքերում փոփոխությունները գնահատում է՝ ելնելով նախկին ցուցանիշներից, հաճախորդների նախկին վարքագծից, տվյալ խմբի վարկառուների կողմից վճարումների կատարման իրավիճակի վատթարացման դիտարկելի տվյալներից, ինչպես նաև տնտեսական պայմաններից, որոնք առնչություն ունեն խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Դեկավարությունն օգտագործում է գնահատականներ՝ ելնելով վնասների նախորդ փորձից այն ակտիվների գծով, որոնք ունեն վարկային ռիսկին բնորոշ հատկանիշներ և առկա է վարկերի խմբին համանման արժեզրկման հայտանիշ: Կազմակերպությունը հիմնվում է դեկավարության դատողության վրա՝ վարկերի խմբի գծով դիտարկելի տվյալները ճշգրտելու համար այնպես, որ դրանք արտացոլեն պատմական տվյալներում չարտացոլված ընթացիկ հանգամանքները: Խմբային հիմունքով գնահատման մեթոդաբանության խնդիրն է՝ ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով:

Ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստավորումը որոշվում է՝ ելնելով ներկա տնտեսական և քաղաքական հանգամանքներից: Կազմակերպությունը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Հայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը

հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

3.9 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Երբ Ընկերությունը մտադրություն ունի վաճառել ոչ ընթացիկ ակտիվներ կամ ակտիվների խումբ և երբ այդ վաճառքի տեղի ունենալը հավանական է 12 ամսվա ընթացքում, ապա ակտիվը կամ ակտիվների խումբը պետք է դասակարգվի և ներկայացվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես վաճառքի համար պահվող ակտիվներ:

Վաճառքի համար պահվող ակտիվները չափվում են ակտիվի՝ մինչև վերադասակարգումն ունեցած հաշվեկշռային արժեքից և «իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից՝ նվազագույնով: Այս ակտիվների գծով մաշվածություն չի հաշվարկվում: Այնուամենայնիվ, վաճառքի համար պահվող որոշ ակտիվներ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվները և հետաձգված հարկային ակտիվները, հաշվառվում են սովորականի պես:

Վաճառքի համար պահվող ակտիվների վաճառքից կամ վերագնահատումից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածներում: Վաճառքի դեպքում տվյալ ակտիվի գծով սեփական կապիտալում առկա վերագնահատման պահուստը վերագրվում է կուտակված շահույթին:

3.10 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.12 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում

մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.13 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունը առաջին անգամ ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը կիրառել է 2018թ. հունվարի 1-ից: Մի շարք նոր ընդունված ստանդարտներ նույնպես կիրառվել են Ընկերության կողմից 2018թ. հունվարի 1-ից, բայց դրանք էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության կողմից նոր ընդունված ստանդարտներին անցման հետևանքով պահանջվող համադրելի ֆինանսական հաշվետվությունները չեն վերաներկայացվել:

ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը սահմանում է համապարփակ մոտեցումներ հասույթի որոշման գծով, թե երբ հասույթը պետք է ճանաչվի և ինչ գումարով պետք է ճանաչվի: Սույն ստանդարտ փոխարինում է ՀՀՄՍ 18. «Հասույթ», ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտներին և համապատասխան մեկնաբանություններին: Համաձայն ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտի, հասույթը ճանաչվում է, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ: Վերահսկողության իրավունքի փոխանցման ժամկետի որոշումը, «Ժամանակի կոնկրետ պահին», թե «Ժամանակի ընթացքում», պահանջում է դատողություններ:

Ընկերությունը ընդունել է ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը՝ օգտագործելով կոմույառիվ (աճողական) ազդեցության մեթոդը (առանց գործնական օգուտ ունենալու մտադրության)՝ սկզբնական ընդունման պահին կիրառելով սկզբնական ընդունումից առաջացող ազդեցությունները (այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ից): Համապատասխանաբար 2017թ. համադրելի ֆինանսական տեղեկատվությունը չի վերաներկայացվել: Այսինքն այն ներկայացված է ինչպես նախորդ տարի ներկայացվել է՝

ՀՀՍՍ 18. «Հասույթ», ՀՀՍՍ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտների և մեկնաբանություններին համապատասխան: Համապատասխանաբար ՖՀՍՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտով պահանջվող բացահայտումները, ինչպես ընդունված է, չեն կիրառվում համադրելի տեղեկատվության վրա:

Ստորև ներկայացված աղյուսակները ամփոփ ներկայացնում են ՖՀՍՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտի ազդեցությունը Ընկերության 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա ազդեցություն: Սույն փոփոխությունները էական ազդեցություն չունեն Ընկերության 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության վրա:

4 Տոկոսային եկամուտ և ծախս

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Տոկոսային եկամուտ</i>		
Հաճախորդներին տրված վարկեր	137,740	117,601
Բանկային հաշիվներ	21,433	31,133
	159,173	148,734
<i>Տոկոսային ծախս</i>		
Ստացված փոխառություններ	(47,943)	(49,112)
	(47,943)	(49,112)
	111,230	99,622

5 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</i>		
Վարկերի տրամադրումից սպասարկումից միջնորդավճարներ	14,058	14,052
	14,058	14,052
<i>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</i>		
Բանկային ծառայությունների համար գանձված միջնորդավճարներ		
Վարկային բյուրոյի ծառայություններ	(1,232)	(394)
	(1,232)	(394)
	12,826	13,658

6 Գործառնական եկամուտներ/(ծախսեր)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխարժեքային տարբերություններից գուտ եկամուտ/ծախս	(6,726)	(791)
Ստացված տույժեր և տուգանքներ	3,187	2,930
Այլ գործառնական եկամուտներ	240	52,350
Այլ գործառնական ծախսեր	(737)	(53,309)
	(4,036)	1,180

**7 Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից կորուստներ
 (արժեզրկման վերականգնում)**

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկում	(185,213)	(67,165)
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման վերականգնում	111,889	70,982
	(73,324)	3,817

8 Անճնակազմի գծով ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին	50,667	43,924
Աշխատակիցների անունից վճարված հարկեր	5,325	5,516
	55,992	49,440

9 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գովազդի և շուկայավարման ծախսեր	755	1,172
Գործառնական վարձակալության գծով ծախս	4,720	18,041
Վերանորոգման և պահպանման ծախսեր	4,000	3,128
Մաշվածություն և ամրոտիզացիա	10,767	11,578
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	1,944	548
Մասնագիտական ծառայություններ	4,722	2,103
Գրասենյակային ծախսեր	2,013	1,717
Ներկայացուցչական ծախսեր	467	396
Տոկոսային ծախսեր վարձակալության գծով	27,204	-
Այլ ծախսեր	7,283	6,080
	63,875	44,763

10 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս Հետաձգված ակտիվների և պարտավորությունների շարժ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	-	-
	(19,172)	(11,344)
	(19,172)	(11,344)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՄ)	(72,785)		24,991	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2018թ.՝ 20%) (Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, զուտ	14,557	(20.0)	(4,998)	(20.0)
	(33,729)	46.3	(6,346)	(25.4)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(19,172)	26.3	(11,344)	(45.4)

11 Գրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	1,789	408
Բանկային հաշիվներ	401	14
	2,190	422

Գրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված, ժամկետանց կամ գրավադրված չեն, դրանց նկատմամբ չկան որևէ սահմանափակումներ: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի բանկերում տեղաբաշխված այնպիսի միջոցներ, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

12 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Բիզնես վարկեր</i>		
Իրավաբանական անձիք	236,561	315,461
Անհատ ձեռնարկատերեր	209,721	197,471
	446,282	512,932
<i>Անհատներին տրված վարկեր</i>		
Հիփոթեքային վարկեր	666,895	575,277
Այլ սպառողական վարկեր	86,051	72,861
	752,946	648,138
	1,199,228	1,161,070
Արժեզրկման գծով պահուստ	(8,375)	(17,069)
	1,190,853	1,144,001

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2019թ. ընթացքում.

Հազար դրամ	Բիզնես վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդը տարեսկզբին	(5,882)	(13,577)	(19,459)
Չուտ (վերկանգնում)/ծախս	529	10,554	11,083
	(5,353)	(3,023)	(8,375)

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2018թ. ընթացքում.

Հազար դրամ	Բիզնես վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդը տարեսկզբին	(5,611)	(9,768)	(15,379)
Չուտ վերկանգնում/ծախս	(271)	(1,419)	(1,690)
	(5,882)	(13,577)	(17,069)

12.1 Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ (%)
<i>Բիզնես վարկեր</i>				
<i>Իրավաբանական անձիք</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	236,561	-	236,561	0.00%
<i>Անհատ ձեռնարկատերեր</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	209,721	-	209,721	0.00%
	446,282	-	446,282	0.00%
<i>Անհատներին տրված վարկեր</i>				
<i>Հիփոթեքային վարկեր</i>				
- ոչ ժամկետանց	651,388	(6,063)	645,325	0.93%
- 31-90 օր ժամկետանց	15,507	(1,840)	13,667	11.87%
	666,895	(7,903)	658,992	1.19%
<i>Այլ սպառողական վարկեր</i>				
- ոչ ժամկետանց	85,579	-	85,579	0.00%
- մինչև 30 օր ժամկետանց	222	(222)	-	100.00%
- 181-270 օր ժամկետանց	250	(250)	-	100.00%
	86,051	(472)	85,579	0.55%
	752,946	(8,375)	744,571	1.11%
	1,199,228	(8,375)	1,190,853	0.70%

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ (%)
<i>Բիզնես վարկեր</i>				
<i>Իրավաբանական անձիք</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	315,461	(271)	315,190	0.09%
<i>Անհատ ձեռնարկատերեր</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	197,471	(1,419)	196,052	0.72%
	512,932	(1,690)	511,242	0.33%

<i>Անհատներին տրված վարկեր</i>				
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	543,759	(4,016)	539,743	0.74%
- մինչև 30 օր ժամկետանց	6,960	(1,267)	5,693	18.20%
- 31-90 օր ժամկետանց	1,361	(154)	1,207	11.32%
- 91-180 օր ժամկետանց	12,620	(2,846)	9,774	22.55%
- 181-270 օր ժամկետանց	10,577	(5,788)	4,789	54.72%
	575,277	(14,071)	561,206	2.45%
Այլ սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	70,140	(904)	69,236	1.29%
- մինչև 30 օր ժամկետանց	330	(31)	299	9.43%
- 31-90 օր ժամկետանց	525	(47)	478	8.98%
- 91-180 օր ժամկետանց	1,866	(326)	1,540	17.49%
	72,861	(1,308)	71,553	1.80%
	648,138	(15,379)	632,759	2.37%
	1,161,070	(17,069)	1,144,001	1.47%

12.2 Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Բիզնես վարկեր

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է աժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Բիզնես վարկերի արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում՝

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

Բիզնես վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս՝ Ընկերությունը հիմնվում է արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Անհատներին տրված վարկեր

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս՝ Ընկերությունը հիմնվում է վարկերի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- անհատներին տրված վարկերի գծով վնասի շարժի դրույքները կայուն են և կարող են գնահատվել վերջին 24 ամիսների ընթացքում կրած վնասի շարժի մոդելի հիման վրա,

- ավելի քան 271 օր ժամկետանց անհատներին տրված վարկերին բաժին է ընկնում 100% վնասի հավանականություն:

12.3 Գրավի վերլուծություն

Բիզնես վարկեր

Բիզնես վարկերը ենթակա են վարկային գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքային որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավն ապահովում է լրացուցիչ ապահովվածություն, և Ընկերությունը, որպես կանոն, գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն բիզնես վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների վերաբերյալ (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների:

Վերը ներկայացված աղյուսակը բացառում է լրացուցիչ գրավի անհրաժեշտությունը:

Մի քանի տեսակի գրավներով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել նպատակահարմար է արժեզրկման գնահատման համար:

Ոչ ժամկետանց կամ ոչ արժեզրկված վարկերի փոխհատուցելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ՝ գրավի արժեքից, և Ընկերության համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Անհատներին տրված վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը:

Ընկերությունը տրամադրում է սպառողական վարկեր ՀՀ դրամով՝ ապահովված երաշխավորությամբ, անշարժ կամ շարժական գույքի գրավով, ինչպես նաև՝ առաջնային շուկայից մեքենաների ձեքբերման վարկեր՝ ապահովված ձեռք բերված մեքենայի գրավադրմամբ:

Վարկերի համար ապահովություն հանդիսացող անշարժ գույքի իրական արժեքն առնվազն հավասար է վարկերի հաշվեկշռային արժեքին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ որոշված արժեքը:

Ընկերության քաղաքականության համաձայն՝ վարկերի գումարի և գրավի արժեքի հարաբերակցությունը սահմանվում է Ընկերության Խորհրդի որոշմամբ:

Բռնագանձված գրավ

Ընկերության քաղաքականության համաձայն բռնագանձված գրավը ներառվում է վաճառքի համար պահվող ակտիվների կազմում և նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

2018 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի բռնագանձված գրավ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն բիզնես վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների վերաբերյալ (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների:

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք
Անշարժ գույք	1,109,471	3,358,305	1,032,450	3,557,605
Փոխադրամիջոցներ	38,663	145,250	30,288	78,756
Սարքավորումներ	-	125,465	-	125,465
Երաշխիքներ	51,094	311,902	98,332	356,431
	1,199,228	3,940,922	1,161,070	4,118,257

12.4 Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են Հայաստանի Հանրապետության հետևյալ մարզերում գտնվող հաճախորդներին.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Վարկ	Տեսակարար կշիռ	Վարկ	Տեսակարար կշիռ
Երևանի մարզ, ՀՀ	1,148,077	95.7%	1,098,665	94.6%
Արարատի մարզ, ՀՀ	11,530	1.0%	13,700	1.2%
Արմավիրի մարզ, ՀՀ	14,890	1.2%	16,603	1.4%
Գեղարքունիքի մարզ, ՀՀ	8,783	0.7%	9,687	0.8%
Լոռու մարզ, ՀՀ	-	0.0%	-	0.0%
Կոտայքի մարզ, ՀՀ	10,095	0.8%	7,761	0.7%
Շիրակի մարզ, ՀՀ	-	0.0%	-	0.0%
Վայոց Ձորի մարզ, ՀՀ	-	0.0%	7,478	0.6%
Արագածոտնի մարզ, ՀՀ	5,853	0.5%	7,176	0.6%
	1,199,228	100.0%	1,161,070	100.0%
Արժեզրկման գծով պահուստ	(8,375)		(17,069)	
	1,190,853		1,144,001	

Վարկեր ստացած հաճախորդներն իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտուր	28,174	178,780
Շինարարություն	77,891	92,440
Առողջապահություն	119,586	131,393
Սպասարկում	78,345	76,430
Անհատներին տրված վարկեր	752,945	651,265
Այլ	142,287	30,762
	1,199,228	1,161,070
Արժեզրկման գծով պահուստ	(8,375)	(17,069)
	1,190,853	1,144,001

12.5 Վարկային ռիսկին ենթարկվածություն

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի 3 վարկառու (2018թ-ին՝ 2), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10% ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 229,240 հազար դրամ (2018թ.-ին՝ 160,074 հազար դրամ):

12.6 Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 12.1-ում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

Վարկային պորտֆելի իրական ժամկետայնությունը կարող է զգալիորեն ավելի երկար լինել պայմանագրային պայմաններով համաձայնեցված ժամկետայնությունից, քանի որ, հավանական է, որ որոշ վարկեր վերանայվեն ժամկետի ավարտից հետո:

13 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Գույք և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Վարձակալած գույքի քարելավումներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	94,033	2,190	9,777	5,149	111,149
Ավելացում	2,153	3,792	651	-	6,596
Օտարում	(8,681)	(2,297)	-	-	(10,978)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	87,505	3,685	10,428	5,149	106,767
Ավելացում	1,652	-	-	-	1,652
Օտարում	-	-	-	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	89,157	3,685	10,428	5,149	108,419
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	52,487	2,007	4,156	2,827	61,477
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	10,181	598	1,597	501	12,877
Օտարման հետևանքով դուրսգրում	(2,692)	(2,129)	(54)	-	(4,875)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	59,976	476	5,699	3,328	69,479
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	9,034	445	1,717	501	11,697
Օտարման հետևանքով դուրսգրում	(93)	-	-	-	(93)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	68,917	921	7,416	3,829	81,083
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	41,546	183	5,621	2,322	49,672
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,529	3,209	4,729	1,821	37,288
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,240	2,764	3,012	1,320	27,336

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 17,143 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներն ուն զրո հաշվեկշռային արժեք, (2018թ.՝ 18,561 հազար դրամ):

Հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկված ծախսերը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, ամբողջությամբ՝ 11,697 հազար դրամ (2018թ.՝ 12,877 հազար դրամ), ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ընդհանուր վարչական ծախսեր» հոդվածում (տես՝ ծանոթագրություն`9):

14 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ստորև ներկայացված է օգտագործման իրավունքով ակտիվների հաշվեկշռային արժեքը և ժամանակաշրջանի ընթացքում շարժը.

Հազար դրամ	Շենքեր և շինություններ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>		
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Ավելացում	-	-
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-
Ավելացում	79,645	79,645
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(16,478)	(16,478)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	63,167	63,167

Ստորև ներկայացված է վարձակալության գծով պարտավորությունները (ներառյալ վարձավճարի գծով պարտավորությունները) և ժամանակաշրջանի ընթացքում փոփոխությունները.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սկզբնական մնացորդ	-	-
Ավելացում	79,645	-
Տոկոսների ավելացում	8,489	-
Վճարված վարձավճար	(21,600)	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	66,534	-
Ընթացիկ	21,600	-
Ոչ ընթացիկ	44,934	-
	66,534	-

Ստորև ներկայացված է շահույթում կամ վնասում ճանաչված գումարները.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	16,478	-
Տոկոսային ծախսեր վարձակալության գծով	8,489	-
	24,967	-

Տարեվերջի դրությամբ սպազա նվազագույն վարձավճարները, որոնք ենթակա են ստացման չչեղարկվող վարձակալությունների գծով.

	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հազար դրամ		
Մինչև 1 տարի	20,313	-
1-ից 5 տարի	59,332	-
	79,645	-

15 Հետաձգված հարկեր

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեկգրի մնացորդ	31,309	20,455
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 10)	(8,114)	11,344
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	-	(490)
Տարեվերջի մնացորդ	23,195	31,309

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2019թ. հունվարի 1	Շահույթի կամ վնասի և այլ համապար- փակ ֆինանսա- կան արդյունք- ների մասին հաշվետ- վությունում ճանաչված	2019թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Հիմնական միջոցների մաշվածություն	3,276	-	3,276
Ստացված փոխառությունների իրական արժեքով ճանաչում	13,265	(807)	12,458
Հաճախորդներին տրված վարկեր և դեբիտորական պարտքերի պահուստից	12,165	-	12,165
Այլ պարտավորություններից	14,925	3,041	17,966
	43,631	2,234	45,865
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հաճախորդներին տրված վարկեր և դեբիտորական պարտքերի պահուստից	(761)	(2,789)	(3,550)
Ստացված փոխառությունների իրական արժեքով ճանաչում	(11,561)	(6,886)	(18,447)
Այլ պարտավորություններից	-	(673)	(673)
	(12,322)	(10,348)	(22,670)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	31,309	(8,114)	23,195

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2018թ. հունվարի 1	Շահույթի կամ վնասի և այլ համապար- փակ ֆինանսա- կան արդյունք- ների մասին հաշվետ- վությունում ճանաչված	2018թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Հիմնական միջոցների մաշվածություն	3,276	-	3,276
Ստացված փոխառությունների իրական արժեքով ճանաչում	7,166	6,099	13,265
Հաճախորդներին տրված վարկեր և դեբիտորական պարտքերի պահուստից	7,702	4,463	12,165
Այլ պարտավորություններից	14,536	389	14,925
	32,680	10,951	43,631
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հաճախորդներին տրված վարկեր և դեբիտորական պարտքերի պահուստից	(762)	-	(762)
Ստացված փոխառությունների իրական արժեքով ճանաչում	(11,463)	(98)	(11,561)
	(12,225)	(98)	(12,323)
Չուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	20,455	10,853	31,308

16 Փոխառություններ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապահովված վարկեր և փոխառություններ - Անորտիզացված արժեքով հաշվարկված Գրավով ապահովված վարկեր ՀՀ բանկերից	433,323	327,681
	433,323	327,681
<i>Չապահովված փոխառություններ - իրական արժեքով հաշվարկված</i>		
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետիրոջից	223,987	281,359
	223,987	281,359
	657,310	609,040

Ոչ ընթացիկ փոխառությունների իրական արժեքները հետևյալն են.

Հազար դրամ	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապահովված վարկեր և փոխառություններ - Անորտիզացված արժեքով հաշվարկված	433,323	327,681	433,323	327,681
Չապահովված փոխառություններ - իրական արժեքով հաշվարկված	223,987	281,359	317,716	322,011
	657,310	609,040	751,039	649,692

Փոխառություններն ունեն 3-5 տարի մարման ժամկետ և տարեկան 7% միջին տոկոսադրույք (2018թ.՝ 7% տոկոսադրույք):

Իրական արժեքը հաշվարկվում է՝ գեղջելով դրամական միջոցների հոսքերը ՀՀ դրամի դեպքում՝ 11.10%, ԱՄՆ դոլարի դեպքում՝ 7.5% (2018թ.՝ ՀՀ դրամի դեպքում՝ 11.74%, ԱՄՆ դոլարի դեպքում՝ 11.43%):

Ընկերության տոկոսային և արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 20-ում:

17 Այլ պարտավորություններ և պահուստներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4,594	3,448
Պահուստներ	6,887	5,423
Հետաձգված եկամուտ	384	254
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	2,367	2,318
Այլ	278	278
	14,510	11,721

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

18 Կապիտալ և պահուստներ

18.1 Բաժնետիրական կապիտալ

Հայտարարված բաժնեմասեր	2019թ.	2018թ.
600,000 սովորական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ 1,000 ՀՀ դրամ	600,000	600,000

Բաժնետեր	2019թ.		2018թ.	
	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)
Վարդան Վարդանյան	600,000	100	600,000	100
	600,000	100	600,000	100

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

18.2 Շահաբաժիններ

2018թ. և 2019թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել:

19 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

19.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Գնահատումները հիմնականում վերաբերվում են հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներին և չօգտագործված արձակուրդային պահուստին:

20 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկային կազմակերպությունների համար և Ընկերության գործառնությունների կարևոր տարր է: Հիմնական ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, կապված են շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերի հետ:

20.1 Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Ընկերության գործունեությունն ապահովելու համար:

Գեկավարությունը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, այն նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Գեկավարությունն ուղղակիորեն հաշվետու է Խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը:

Ստորև ներկայացված են ֆինանսական գործիքների կատեգորիաները.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
- Դրամական միջոցներ և համարժեքներ	2,190	422
- Հաճախորդներին տրված վարկեր	1,190,853	1,144,001
- Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	63,167	-
- Առևտրային դեբիտորական պարտքեր	-	-
	1,256,210	1,144,423

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
- Վարկեր և փոխառություններ	657,310	609,040
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,872	3,726
- Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	68,770	-
	730,952	612,766

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի, այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Կազմակերպության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

	2019թ.		2018թ.	
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր	23.20%	16.90%	23.90%	19.20%
Պարտավորություններ				
Փոխառություններ	11.10%	7.50%	11.74%	11.43%

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ վարկային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Ընկերության վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Վարկերի համար ներկայացվող դիմումները պատրաստվում են վարկավորման բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից, այնուհետև փոխանցվում են Վարկային կոմիտեին, որը պատասխանատու է վարկային պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական վիճակի ուսումնասիրության վրա: Վարկային կոմիտեն ուսումնասիրում և հաստատում է վարկի դիմումը:

Ընկերությունը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը:

Ընկերության վարկային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները		
- Գրամական միջոցներ և համարժեքներ	2,190	422
- Հաճախորդներին տրված վարկեր	1,190,853	1,144,001
- Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	63,167	-
	1,256,210	1,144,423

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 12.5-ում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կարող է դժվարություններ ունենալ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Ընկերությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բաժնետերից, բանկերից և այլ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Կազմակերպությունը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետային վերլուծություն.

2019թ.

Հազար դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
<i>Ոչ ածանցյալ պարտավորություններ</i>						
Փոխառություններ	-	-	-	-	657,310	657,310
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,872	-	-	-	-	4,872
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	1,800	5,400	5,400	10,800	45,370	68,770
	6,672	5,400	5,400	10,800	702,680	730,952

2018թ.

Հազար դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
<i>Ոչ ածանցյալ պարտավորություններ</i>						
Փոխառություններ	-	-	-	-	609,040	609,040
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,726	-	-	-	-	3,726
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	-	-	-	-	-	-
	3,726	-	-	-	609,040	612,766

20.2 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Նկարագրություն</i>				
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,190	2,190	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	1,190,853	1,190,853	-	-
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	63,167	-	-	63,167
Ընդամենը	1,256,210	1,193,043	-	63,167

Հազար դրամ	Իրական արժեքի հիերարխիայի չափում			
Նկարագրություն	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	657,310	-	657,310	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,872	4,872	-	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	68,770	-	-	68,770
Ընդամենը	730,952	4,872	657,310	68,770

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	422	422	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	1,144,001	1,144,001	-	-
Ընդամենը	1,144,423	1,144,423	-	-

Հազար դրամ	Իրական արժեքի հիերարխիայի չափում			
Նկարագրություն	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>				
Փոխառություններ	609,040	-	609,040	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11,721	11,721	-	-
Ընդամենը	620,761	11,721	-	-

20.3 Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վարկային կազմակերպությունները, որոնք հրապարակային օֆերտայի միջոցով չեն ներգրավում փոխառություններ և չեն իրականացնում կանխիկ արտարժույթի գործառնություններ՝ բացառությամբ գործառնությունների, որոնք կապված են վարկերի մարումների ընդունման հետ, պետք է ապահովեն միայն 150,000 հազար դրամ գումարի չափով նվազագույն կանոնադրական և ընդհանուր կապիտալ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 150,000

հազար դրամ): 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ապահովում է նվազագույն կանոնադրական կապիտալի պահանջները: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն Կազմակերպության ընդհանուր կապիտալը կազմել է՝ 621,761 հազար դրամ (2018թ.-ին՝ 650,361 հազար դրամ): Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել: 2019-2018 թվականների ընթացքում Ընկերությունում վերոհիշյալ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն եղել:

21 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

Իրացվելիության դժվարությունների հետ կապված, ինչպես նաև Հայաստանի շուկայում հրապարակված «տոկոսադրույքի հայտանիշների» բացակայության պատճառով, և ելնելով այն փաստից, որ Ընկերության գործարքների մի մասն իրականացվել է կապակցված կողմերի հետ և առանձնահատուկ բնույթի է՝ իրատեսական չէ որոշել ստացված փոխառությունների իրական արժեքները:

22 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2020թ. առաջին կիսամյակում նոր կորոնավիրուսի (COVID-19) համաճարակի արագ տարածումը խիստ ազդեցություն է ունեցել ամբողջ աշխարհի գրեթե բոլոր պետությունների տնտեսությունների վրա: Մի շարք երկրներ, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, ձեռնարկել են միջոցառումներ, որոնք էական ազդեցություն են ունեցել ոլորտների մասնակիցների գործունեության վրա: COVID-19 պատճառով բազմաթիվ երկրներում, ներառյալ Հայաստանի Հանրապետությունում, բիզնեսները ստիպված են եղել անորոշ ժամկետով դադարեցնել կամ սահմանափակել գործունեությունը: Վիրուսի տարածման դեմ ուղղված միջոցառումները, հանգեցրել են բիզնեսի էական խափանումների, հանգեցնելով տնտեսական աճի տեմպերի նվազման, ինչպես երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության ՀՆԱ-ի կրճատման:

Ընկերությունը այս համաճարակը գնահատում է որպես հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտվող իրադարձություն, որի ազդեցության քանակական գնահատումը Ընկերության վրա գործնականորեն հնարավոր չէ իրականացնել բավարար ճշգրտությամբ:

Ներկայումս Ընկերության ղեկավարությունը վերլուծում է տնտեսական պայմանների փոփոխության հնարավոր ազդեցությունը Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

23 Պայմանականություններ

23.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված

չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23.2 Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Դեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

Դեկավարությունը տեղյակ չէ Ընկերության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

23.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Դեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

23.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Ընկերությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Ընկերությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Դեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

24 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության բաժնետերերին, հիմնական ղեկավար անձնակազմին և նրանց հետ կապակցված կազմակերպությունները:

24.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Վարդան Վարդանյանի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%-ը:

24.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2019թ. դեկտեմբերի 31-ին և նույն ժամանակաշրջանում ավարտված տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացված գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները.

Ստացված փոխառություններ (հաշվեկշռային արժեքով)

Հազար դրամ	Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա ընթացքում տրված փոխա- ռություններ
<i>100 % բաժնետեր</i>		
Վարդան Վարդանյան	317,723	82,393
	317,723	82,393

Հազար դրամ	Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա ընթացքում տրված փոխա- ռություններ
<i>100 % բաժնետեր</i>		
Վարդան Վարդանյան	322,010	38,656
	322,010	38,656

24.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության խորհրդի նախագահը հանդիսանում է Ընկերության 100 տոկոս բաժնետեր:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել և մարել է հետևյալ վարկերը, որոնք ներառված են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության «Հաճախորդներին տրամադրված վարկեր» տողում.

Խտացված վարկեր (հաշվեկշռային արժեքով)

2018թ. ընթացքում ղեկավարությանը տրամադրված վարկերի և դրանց մնացորդի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա ընթացքում մարված վարկեր	Տարվա ընթացքում ստացված վարկեր	Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ղեկավար անձնակազմ	317,723	(86,680)	82,393	322,010
	317,723	(86,680)	82,393	322,010

Հազար դրամ	Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա ընթացքում մարված վարկեր	Տարվա ընթացքում ստացված վարկեր	Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ղեկավար անձնակազմ	322,010	-	38,656	283,354
	322,010	-	38,656	283,354

Ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ՝ «Անձնակազմի գծով ծախսեր» տողում.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	24,186	19,569
	24,186	19,569